

Սրտի ցաւով լսեցինք որ Մառ գաւ տարի միտք չունի պեղման այս մեծ գործը շարունակելու, ինչպէս որ Տփղիսի մէջ նշանաւոր ազգայնոց նախաձեռնութեամբ ի պատիւ իրեն (Մառի) տուած հացկերպութի ժամանակ եւ իւր АНІЙСКАЯ СЕРІА, Nr. 2 զեկոյցագրի վերջաբանի մէջ կըսէ: Պ. Սերերբրեակեանի առթիւ մը բռնած դիրքը վշտացուցած է իրենքը, ինչպէս նաեւ ուրիշներու վերապահեալ վարմունքը: Սակայն կարծեմ Պ. Սերերբրեակեանի վարմանց մէջ Մառի անձնականին եւ գործունէութեան մասին ճիշդ անկասկած ազատ չկայ, թէ եւ ըստ ինքեան Սերերբրեակեանի ալ վարմունքը այլուստ անբարձր եւ անպատեհ կրնայ համարուիլ: Գետերբուրգի եկեղ. խորհրդի ժողովքը ուզած է 2000ի փոխարէն 3000 բուրձի յատկացնել լսեց պեղմանց համար, Պ. Սերերբրեակեան Ազգային թանգարանի բացակայութեան պատճառաւ այնչափ նպատակայարմար չէ համարած եւ դիմադրած է. այդ դիմադրութիւնը ծանր եկած է Մառի:

Եթէ կ'ուզուի ազգային նուիրական գործոյն արժանաւոր դիրք եւ մնայուն նշանակութիւն տալ, հարկ է անպատճառ կարեւորութիւն տալ Ազգային թանգարանի հիմնարկութեան գեղեցիկ գաղափարին, զոր վառվռուն նախանձանդութեամբ ջանաց արծարծել Պ. Սերերբրեակեանը, որուն աջին աջակից Սերգիսացաւ Եղիկ աւթ. Երզնկեանց, երկուքն ալ «Հովիւ», թերթին Մարտ 16 եւ 30 թուերուն մէջ: Ստուգել ալ ոչինչ միութարութիւն է՝ տեսնել, որ մեր Մայր երկրին ծոցէն արիւն քրտինջով դուրս բերուած յարգելի հնութիւններն, քիռ ու ցան կը կորստին ստարութեան մէջ եւ կամ առ առաւելն օտար թանգարաններու մէկ անկիւնը մոռացութեան կը մատնուին: Թանգարանի կից անհրաժեշտ է ունենալ նաեւ համեստ գրադարան մը, որ ձիւրացած ըլլալու է գլխաւորաբար հայ պատմական մատենադրութիւններով, ուսումնասիրութիւններով եւ եւրոպական այս կարգի ձոխ հրատարակութիւններով, ինչպէս Գերպ. Երզնկեանց կը յանձնէ, որպէս զի դիւրանայ եղած առարկաներու ուսումնասիրութիւնն, մանաւանդ որ մեզի առհասարակ կը պակսի այսպիսի անհրաժեշտ գրադարան մը, գտնէ մեր երկրին մէջ: Ուր հաստատուելուն խնդիր առ այժմ պատահական է. էականն է կազմել ձեռնհաս յանձնաժողով մը, որ խորհի գործադրութեան եւ միջոցներու վերայ: Ուրախալի է տեսնել որ Հայոց Ազ-

գագրական Ընկերութիւնը արդէն որոշած է «Կախապատրաստութիւններ տեսնել մի Աշխարհաւ-հնագիտական Ուսումնական հիմնելու»:

«Այս նպատակով հրատարակեց մի՝ Եւրագիր Հայոց Ազգագրական թանգարանի համար նիւթեր հաւաքելու, պատրաստեց տպագրուած եւ ժապաւնուած մատենաներ՝ պեղում, գնում եւ նուէր ստացուած իրերը ցուցակագրելու համար եւ ուղարկելով ընկերութեան ձիւղերին՝ յանձնարարեց հիմնել թանգարանական պահեստարաններ եւ հաւաքել ազգագրական հնագիտական իրեր: Մի այսպիսի պահեստարան եւս այստեղ, Թիֆլիսում, հիմնելով, ընկերութեանս Խուրհուրդը յոյս ունի, որ մատիկ ապագայում, երբ բաւականաչափ իրեր հաւաքուած կը լինին, Ազգագրական Ընկերութեան կենդրոնի եւ ձիւղերի ներկայացուցիչներին ընդհանուր ժողով կը գումարի՝ որոշելու թէ ուր պէտք է հիմնել այդ թանգարանը, ուր եւ անմիջապէս կը տեղափոխուին այդ բոլոր առեւտրում հաւաքուած իրերը: Այս գեղեցիկ եւ կարեւոր գաղափարին իրականացման պարտաւոր է աջակցիլ ամէն հայ, դիմել Ընկերութեան Յարգելի գանձապահին Պ. Առաքել Մարութանեանի ի Տփղիս: Ազգային թանգարանի եւ գրադարանի հիմնարկութիւնն ամենափայլուն ապացոյցը պիտի ըլլայ Հայ ազգին քաղաքակրթութեան:

Հ. Ա. ԱՆԾՏՈՍՏԵԱՆ

6. Գ Ե Ռ Գ Դ Ո Ւ Ո Ս Ե Ն Ի Դ .

Սիմֆերոպոլէն Մեծապատիւ Գրիգոր Սպեւդիարեան Յունիս 24ին Խմբագրութեան ուղղած հեռագրով մը կը գուժէր իւր բարեկամին Գոգոյեանի մահը: «Կաշարեանց դատուն՝ Գորպատի վառվռուն ուսանողութեան շարքէն ըլլալով առանց հսկայ հատորներ հեղինակելու՝ յաջողեցաւ անմահանալ հայ ժողովրդեան մէջ միայն իւր ժողովրդական «Դիմիտրի», երգով: Գոգոյեան բարձրագոյն կրթութեամբ օժտուած ըլլալուն՝ պարտական էր իւր տաղանդը օգտակարապէս գործածել ժողովրդեան լուսաւորութեան համար, զարգարելով անոր խեղճուկ գրականութիւնն պատկառելի հատորներով: Այս հատորներու բացակայութեան պատճառաւ հարկ է որոնել հանգուցելոյն, խորհրդական կենքեր թաքուն ծալքերու մէջ: Գոգոյեան որչափ ալ իւր միայնացեալ կենքով մշտնջենաւոր ըլա-

Թեան մասնուած էր, բայց իւր բացակայութիւնն այսօր հայութեան սրտին վրայ վշտի նուրբ քող մը ձգած է: Գողթնեանի միակ աչքի զարնող ծնունդը “Ծիծեռնակ”ն է, որ բնականաբար անուշ պիտի գար եւ ընդհանրապէս այն ժողովրդեան որուն դարաւոր բախտը եղած է մորմորիչ պանդխտութիւնն: Հայ պանդուխտ զաւակն կ'երգէ պանդուխտի երգը իւր ընտանիքէն հեռու գտնուելուն համար, իսկ ընտանիքը՝ հարազատին ցաւին գիտակից, անոր ցաւակցելու համար: Գողթնեանի ալ նոյն բախտը վիճակած էր. այդ բախտին ալ ծնունդ է “Ծիծեռնակ”ը:

Ծնած է 1830 (1831 ըստ ոմանց), կրթութիւնն առած Մոսկուայի Լազարեան ճեմարանի մէջ, զոր 6 տարիէն աւարտելով՝ կը յաճախէ Պետերբուրգի համալսարանն մինչեւ 1851: Յետոյ կ'անցնի Գորպատ եւ 1859ին կ'աւարտէ իրաւաբանական ճիւղը: Ղզլարի մէջ քաւանթարեանց կալուածոց կառավարի պաշտօնը կը վարէ: Յետոյ կ'երթայ Ղզլմ իւր ծննդավայրը եւ 1877ին հոն՝ Արմֆերոպոլի պետական վարժարանի մէջ ուսուցչութիւն կ'ընէ ուս. լեզուի 21 տարի: 1898ին՝ պետական խորհրդականի աստիճանը կ'ընդունի համառոտ կենսամոռակով եւ կ'ապրի առանձնական կեանք մը, որուն կենսական արեւը խլաց անողոր բնութեան կարգը:

Հ. Ա. ԱՌԵՏԻՍԵԱՆ

7. ԳՐԻԳՈՐ ՎԱՆԿՅԵԱՆ Ժ

Այս կորովե յոժը պարտուած կեանքի դառնութեան անշայտ հոսանքէ մը, Մայիս 5ին իւր եւ կեանքի մէջ եղած յարաբերութիւնը կը խզէ 40 տարեկան հասուն հասակին մէջ:

Գ. Վանցեան ազգային կրթուած գէմբեքէն էր. Դերսիսեան վարժարանը աւարտելով յաջողած էր Եւրոպայ իւր ուսումը կատարելագործելու անցնիլ, ուսկից դառնալով՝ Տփղիսի առեւտրական դպրոցի մէջ հայերէն լեզուի դաստաւութիւն կ'ընէր: Հայ ուսուցչութեան յառաջդիմութեան բարեխիղճ մարդիկներէն էր, որուն կորուստը նոր կազմակերպիչ սկսած միութեան զգալի վնաս մըն էր:

Գ. Վանցեան հայ գրականութեան մէջ ալ ձեռնհաս յոժ մըն էր. ահա իւր գրածոց ցանկը:

1. Դպրոցական քերականութիւն. Ալեքսանդրապոլ 1906. Բ. տպ. Տփղիս 1907.

2. Հայ հեղինակներ. Տփղիս, 1905. Բ. տպ. 1906.

3. Հայոց պատմութիւն. Տփղիս 1906. Բ. տպ. 1908.

4. Պատմական քերականութիւն. Տփղիս, 1906.

5. Գրպանի ուղղագրութիւն. Տփղիս, 1906.

6. Հայ լեզու (պատկերազարդ այբբենաբան) Տփղիս 1907.

7. Армянские цыганы. Тифлисъ 1901.

Բաց ի իւր այս գրութիւններէն աշխատակցած է նաեւ այլեւայլ Թերթերու՝ ինչպէս եւ “Հնար. Արեւիշ, Իս” “Մշակ”ի մէջ իւր կենաց վերջի օրերուն տուած յօդուածը առանձին համակրանքի արժանի է, ուր Թերթեր կարելի ըլլալ իւր կեանքի հրատապ պատկերը նշմարել:

Հ. Ա. ԱՌԵՏԻՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՅՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Հայերէն նոր բառեր. 193: — Կիւրիոսի կաթողիկոս վրաց. 202: — Յուցակ ձեռագրաց Թաւրիզի. 204:

ՀԵՋՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ — Անճայ զաւառաբարբառը. 207: — Ստուգարանական հետազոտութիւնը. 212:

ԻՐԵՒԵԳԻՏԵԿԱՆ — Անճարկ մը հայ իրականաց պատմութեան վրայ եւ Յ. Կարստի նոր երկապիտակութիւնները. 215:

ԱՅԼԵԻԱՅԻԹ — 1. Ստեփանոս Ասողիկ գերմաններէն. 219: — 2. Հայերէն յիշատակարան մը (ԺԳ. դարէ) յունարէն Աւետարանի մը մէջ. 220: — 3. Թուրք նորայր Քիւզանդացու առ Հ. Ն. Ա. 221: — 4. Նկատողութիւն մը. 221: — 5. Անիի Պեղումը. 222: — 6. Գէորգ Դողդեանս Ժ. 223: — 7. Գրիգոր Վանցեան Ժ. 224:

ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԽՄԿԱԿԻՐ

Հ. ԱՌԱՅԱՆԵԼ Կ. ՊԱՐՈՆԶ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԲԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ